



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



«24» 02 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 042 - 25

Նախաձեռնող՝

«ԱՐՄՊԵՌԼԻՏ» ՍՊԸ
Ք. Երևան, Արաբկիր, Մալխասյանց 4

Գործունեությունը՝

Արագածի պեռլիտի հանքավայրի
արդյունահանում
Արագածոտնի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 042 - 25

«24» փետրվարի 2025թ.

Արագածի պեռլիտի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝

«ԱՐՄՊԵՌԼԻՏ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Ա կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Արագածավան բնակավայր

Ներածական մաս. Արագածոտնի մարզի Արագածի պեռլիտի հանքավայրը գտնվում է Թալին խոշորացված համայնքի Արագածավան բնակավայրի վարչական տարածքում՝ Արագածավան բնակավայրից 4,5 կմ, Կանչ և Հակկո բնակավայրերից համապատասխանաբար՝ 4.3 կմ, 4.5 կմ հեռավորությունների վրա: Հայցվող տարածքի օտարման մակերեսը կազմում է 9,23 հա:

Հայցվող տարածքի հողերը ներկայացված են համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրերով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի թ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Արագածի պեռլիտների հանքավայրի պաշարները հաստատավել են 1975թ. հունվարի 1-ի դրությամբ ՍՍՀՄ Պաշարների Պետական Հանձնաժողովի (ԴԿ3 СССР)-ի կողմից, 1976 թվականի նոյեմբերի 19-ին, թիվ 7732 արձանագրությամբ և կազմել են՝ փքված պեռլիտի ստացման համար՝ B- կարգով՝ 44069.4հազ.մ³ C1- կարգով՝ 47557.6 հազ.մ³ այդ թվում կանազիտի արտադրության համար՝ B-կարգով՝ 31789.0 հազ.մ³ C1-կարգով՝ 46154.6հազ.մ³:

«ԱՐՄՊԵՌԼԻՏ» ՍՊԸ-ին հատկացվող բացահանքի սահմաններում հաշվեկշռային պաշարները կազմում են՝ 2146400մ³, որից՝ B կարգով - 1575600մ³ C կարգով - 570800մ³:



Հանքավայրի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով, առանց հորատապայթեցման, տարեկան 107320 մ³ արտադրողականությամբ /մարվող պաշար/:

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը.

բացահանքի առավելագույն երկարությունը – 816 մ,

բացահանքի առավելագույն լայնությունը – 262 մ,

օգտակար հանածոյի առավելագույն հզորությունը – 48.6 մ,

օգտակար հանածոյի միջին հզորությունը –23.25 մ,

օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը – 2146.4 հազ. մ³,

օգտակար հանածոյի արդյունահանվող պաշարների քանակը – 1826.2 հազ. մ³,

բացահանքի մշակման խորությունը՝ մինչև 1230.0 մ բարձրության հորիզոն,

մակաբացման ապարների միջին հզորությունը -0.23 մ,

մակաբացման ապարների քանակը 21900 մ³,

Նախագծվող բացահանքի ծայրակետերի կոորդինատներն են՝

1. X=4469017.9535 Y=8390561.8484
2. X= 4468942.2456 Y=8390752.4219
3. X= 4468907.7598 Y=8390798.3917
4. X= 4468753.2061 Y=8390682.4481
5. X= 4468667.1475 Y=8390628.4114
6. X= 4468537.0589 Y=8390534.3474
7. X= 4468461.0072 Y=8390502.3257
8. X= 4468392.9607 Y=8390480.3107
9. X= 4468318. 9103 Y=8390464.2999
- 10.X= 4468234.8531 Y=8390432.2781
- 11.X= 4468216.3883 Y=8390421.3886
- 12.X= 4468230.2534 Y=8390396.5461
- 13.X= 4468258.3785 Y=8390412.9634
- 14.X= 4468319.3360 Y=8390425.3993
- 15.X= 4468399.6176 Y=8390439.5123
- 16.X= 4468516.1695 Y=8390473.6519
- 17.X= 4468516.1695 Y=8390473.6519
- 18.X= 4468579.4638 Y=8390486.9816
- 19.X= 4468649.0801 Y=8390487.8225
- 20.X= 4468697.1469 Y=8390505.8928
- 21.X= 4468779.7645 Y=8390489.5229
- 22.X= 4468853.2361 Y=8390523.6909
- 23.X= 4468876.2400 Y=8390523.6909
- 24.X= 4468913.0316 Y=8390508.2414
- 25.X= 4468998.6798 Y=8390548.09

Ծառայման ժամկետն 20 տարի է:

Հանույթային աշխատանքները նախատեսվում է կատարել էքսկավատոր ավտոինքնաթափ համալիրով: Արդյունահանված ապարները բացահանքից նախատեսվում է տեղափոխել սպառողի ավտոինքնաթափով:



Բացահանքի շահագործման ընթացքում տեղի են ունենալու օգտակար հանածոյի անխուսափելի կորուստներ: Ընդամենը կորուստները կկազմեն՝ 320200 մ³ կամ 14.92 %:

Աշխատանքների կազմակերպման համար հանքավայրում նախատեսվում է տեղադրել արդյունաբերական հրապարակ՝ 40 մ³ ծավալով: Նախատեսվում է կառուցել 657 մ երկարությամբ և 6 մ լայնությամբ ավտոճանապարհ:

Դեպի բացահանք անձրևաջրերի արտահոսքը բացառելու նպատակով բացահանքի հյուսիսային մասով նախատեսվում է 310 մ երկարությամբ ջրհեռացման առվի անցում:

Բացահանքի մակաբացման ապարների ընդհանուր քանակն է 31200 մ³, այդ թվում 21900 մ³ ավազակավերով, ավազներով, խճով, կոպիճով ներկայացված, միջինը 0.23 մ հզորությամբ, հողաբուսական շերտով և 9300 մ³ օգտակար հաստաշերտի տանիքը մակաբացման ապարներից մաքրելու ժամանակ խառնված ապարներով:

Մակաբացման ապարները սկզբնական շրջանում պահեստավորվելու են բացահանքի հարավային մասում ընկերությանը տրամադրվող սահմանների մեջ, հողաբուսական շերտը N1 ներքին ժամանակավոր լցակույտ, իսկ մակաբացման ապարները՝ N2 ներքին ժամանակավոր լցակույտ: N1 և N2 լցակույտերը միմյանց հարևանությամբ են, իրարից առանձին: Մակաբացման աշխատանքների կատարումը՝ հավաքումը, կուտակումը, և տեղափոխումը մինչև 10-50մ հեռավորությամբ կատարվելու է բուլդոզերի օգնությամբ, որի արտադրողականությունը 800 մ³ /հերթ է: Ժամանակավոր լցակույտի մակերեսը վերին մասում կլինի 3670 մ², հիմքում՝ 7400 մ², միջին բարձրությունը կկազմի 6 մ:

Բացահանքի կարիքների համար ջուրը պայմանագրային հիմունքներով կվերցվի Արագածավան բնակավայրից: Բացահանքի ջրամատակարարումը տեխնիկական ջրով կատարվելու է ջրցան-վճարող ավտոմեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ջրի ցիստեռնով:

Կենցաղային կեղտաջրերը՝ օրական 0.15 մ³ ծավալով, լցվելու են բետոնային լցարան, որտեղից պարբերաբար տեղափոխվելու են օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բացահանքում արդյունահանումը կատարվելու է առանց հորատապայթեցման աշխատանքների կիրառման:

Աղմուկի մակարդակը սանիտարապաշտպանիչ գոտու սահմանին կկազմի՝ 40դԲԱ:

Նախատեսվում է, որ տարեկան կառաջանա 2,4 մ³ կամ 0,6 տ պինդ կենցաղային թափոններ: Կենցաղային աղբը տեղափոխվելու է մոտակա աղբահավաք կետեր:

Ըստ հաշվետվությունում եղած տեղեկատվության և ստացված կարծիքի համաձայն հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն դիտարկվել, պատմության, բնության հուշարձաններ գործունեության իրականացման տարածքում առկա չեն:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին (օրական 2 անգամ):

-Բացահանքի արդյունաբերական հրապարակի շրջակայքում հնարավոր չափով կանաչապատում թփուտներով:



-Դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա խլացուցիչների և արտանետվող գազի հոսքի վրա զտիչների տեղադրում՝ թունավոր խառնուրդների չեզոքացման համար:

-Նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվելու է համապատասխան թեքություն և որն ապահովելու է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը:

- Օգտագործված յուղերն ու քսայուղերը հավաքվելու են առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ հնարավորություն ստեղծվելու դեպքում՝ երկրորդական վերամշակման համար:

- Հնամաշ դետալներն ու մասերը հավաքվելու են հատկացված առանձին տեղում և հանձնվելու են որպես մետաղական ջարդոն:

- Կեղտաջրերը հավաքվելու են հորատի պ զուգարանում, որը հետագայում դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով:

Բնապահպանական միջոցառումների իրականացման համար տարեկան նախատեսվում է 350000 ՀՀ դրամ գումար:

Շահագործման 16-րդ տարվանից սկսած նրա 1255.0մ, 1250.0 մ բարձրության հորիզոնների շահագործման ավարտից հետո աստիճանաբար մակաբացման ժամանակ ներքին լցակույտ տեղափոխված մակաբացման ապարները կտեղափոխվեն և կփոխվեն այդ հորիզոնների հատակին: Մինչև շահագործման ավարտը ներքին լցակույտերից այդ հորիզոններ կտեղափոխվի 29490մ³ ծավալ, կլցվի 0.5մ բարձրությամբ և կհարթեցվի: Իսկ շահագործման ավարտից հետո՝ 2390մ³ ծավալը կլցվի 1245.0մ բարձրության հորիզոնում 4780մ² մակերեսի վրա և կհարթեցվի: Ռեկուլտիվացիոն աշխատանքները կկատարվեն բացահանքի բացված հատակի ողջ մակերեսով՝ 64300 մ², ինչպես նաև արտադրական հրապարակը 250 մ², ավտոճանապարհները՝ 300մ² : Ընդհանուր մակերեսը կլինի՝ 64850 մ²:

Ընդամենը լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացման ծախսերը կկազմեն՝ 2411.7+1300=3711.7հազ.դրամ:

Աշխատանքների իրականացման ընթացքում ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

-Մթնոլորտային օդի որակի պարբերական մշտադիտարկումներ՝ շաբաթական մեկ անգամ:

-Հողային ծածկույթի մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ:

-Աղմուկի և թրթռման մակարդակի գործիքային չափումներ՝ ամսական մեկ անգամ :

-Կենսաբազմազանության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 450.0 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Արագածոտնի մարզի Արագածի պեոլիտի հանքավայրի արդյունահանման աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային լսումներ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան բնակավայրում, որոնց ընթացքում մասնակիցները հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի,



կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն և Արագածոտնի մարզպետարանը: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և բնապահպանական միջոցառումների իրականացման արդյունքում կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները Կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

- Աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:

-Աշխատանքների իրականացման գործընթացում ներգրավել ազդակիր բնակավայրի բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ԱՐՄՊԵՌԼԻՏ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Արագածոտնի մարզի Արագածի պեղիտի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Կերիքնագ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Գոհար Մինայան